ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1301Ա

25 օգոստոսի 2026թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2023WJNXFT և «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 13.03.2026թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0098հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 83.6քմ /83.6քմ արտաքին և 72.5քմ ներքին/ մակերեսով հասարակական նշանակության շինությունները համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանց զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:

2.Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0098հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 83.6քմ /83.6քմ արտաքին և 72.5քմ ներքին/ մակերեսով հասարակական նշանակության շինությունները:

3.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող ընդհանուր 83.6քմ /83.6քմ արտաքին և 72.5քմ ներքին/ մակերեսով հասարակական նշանակության շինությունները և դրանց պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 0.0098հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Արա Հրանտի Միրզոյանին:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1302Ա

25 օգոստոսի 2026թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 13.03.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011F5DBYLX.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող հասարակական նշանակության շինություններին և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0098հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց, թիվ 8:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1303Ա

25 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՈՒՎԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՈՒՎԱ» ՍՊ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 20-ի N 13276).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՈՒՎԱ» ՍՊ ընկերությանը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Աղավնատուն բնակավայրի Ն. Մաթևոսյան փողոց 1 հասցեում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 196 կցվում է):
2. Ընդունել ի գիտություն, որ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

X

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1304Ա

25 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

«ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և «ԻՄԻՋ.Մ..Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 25-ի N 13557).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԻՄԻՋ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2026 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 15.850 կմ և Մ5, 15.150 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 198 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

X Ստորագրող ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ 3805900589

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1305Ա

25 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 25-ի N 13559).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2026 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 16.050 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 197 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1306Ա

25 օգոստոսի 2026թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.01.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04022SMHPHES.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Ոսկեհատ գյուղի Պ.Սևակի փողոցում գտնվող 0.0138հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գ. Ոսկեհատ, Պ.Սևակի փողոց, թիվ 5/1:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1307-Ա

25 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ԱՐՏԱՇԵՍ ԱՇՈՏԻ ԱՄԻՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ ՎԻ 23/26 վարչական գործը՝ **Արտաշես Աշոտի Ամիրյան**ի կողմից Վաղարշապատ համայնքի ք.Էջմիածին, Վազգեն Առաջին թիվ 3 շենքին հարակից տարածքում գտնվող «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության իրականացրել է այլ կառույց տեղադրելու համար վարչական տույժ նշանակելու և ինքնակամ կառույցները քանդելու վերաբերյալ, **պարզեց որ.**

Արտաշես Աշոտի Ամիրյանը (հասցե՝ ք.Երևան, Ավան, թիվ 10 փողոց, թիվ 12 տուն, անձնագիր՝ AT0334625, տրված 18.12.2019թ, 057-ի կողմից) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի թիվ 3 շենքին հարակից, «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության տեղադրել է այլ կառույց, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 10.08.2026 թվականին կազմված թիվ 11 արձանագրության, տեղազննության և լուսանկարների հիման վրա 2026 թվականի օգոստոսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում Արտաշես Աշոտի Ամիրյանի մասնակցությամբ:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

1. Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 10.08.2026 թվականին կազմված թիվ 11 արձանագրությունը:
2. 10.08.2026 թվականին կատարված տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
3. 10.08.2026 թվականին և 25.08.2026 թվականին կազմված տեղազննությունները:

4. Հանձնաժողովի 18.08.2026թ.-ի թիվ ՎԻ 23/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 11 արձանագրությունը:

5. «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 2165553, տրված 24.11.2006թ.-ին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից իրավախախտման վայր կատարած այցի ժամանակ պարզվել է, որ Արտաշես Աշոտի Ամիրյանն «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության տեղադրել է այլ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի օգոստոսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 18-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արտաշես Աշոտի Ամիրյանը և «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ն:

«ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ն, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Արտաշես Աշոտի Ամիրյանը ներկայանալով վարչական վարույթի նիստին հայտարարեց, մեջբերում 18.08.2026թ.-ի թիվ 1 արձանագրությունից. *«Ես Արտաշես Ամիրյանս, սույնով հայտնում եմ, որ արձանագրված իրավախախտումը 24.08.2026 թվականը մինչև կվերացնեմ, այն է՝ ինքնակամ Քոֆի թայմ ֆրեշի տաղավարը կապամոնտաժեմ և կվերացնեմ իրավախախտման հետևանքները»*:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից 25.08.2026 թվականին կրկին կատարվել է այց իրավախախտման վայր և կազմվել է տեղազննության արձանագրություն, համաձայն որի՝ Վաղարշապատ համայնքի ք.Էջմիածին, Վազգեն Առաջին թիվ 3 շենքին հարակից «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ տեղադրված տաղավարը ապամոնտաժվել է, ազատվել է «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ի սեփականությունը հանդիսացող հողամասը և հողամասը բերվել է նախկին տեսքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով 25.08.2026թ.-ին տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը:

Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը...:

Տվյալ դեպքում՝ Արտաշես Աշոտի Ամիրյանը կանխել է իրավախախտման վնասակար հետևանքները և կամավոր հեռացրել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի թիվ 3 շենքին հարակից տարածքում գտնվող «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՑ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ տեղադրված տաղավարը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, Արտաշես Աշոտի Ամիրյանի կողմից դրսևորած վարքագիծը՝ իրավախախտումը դադարեցնելու և հետևանքները վերացնելու ուղղությամբ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ

3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արտաշես Աշոտի Ամիրյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2.Նախազգուշացնել Արտաշես Աշոտի Ամիրյանին, որ սույն որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարքը տուգանք նշանակելուց հետո շարունակել կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1308-Ա

26 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՆՈՒՉՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 55 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հրաչյա Գևորգի Միրզոյանի լիազորված անձ /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել վրեժի Ղարիբյանի կողմից 20.05.2026թ. հաստատված 3896 սեղանամատյանով գրանցված լիազորագիրը/ Էմմա Հապետի Արշակյանի դիմումը ՝ պարզվեց, որ Հրաչյա Գևորգի Միրզոյանին և Հասմիկ Պանդուխտի Ներսեսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի թիվ 18052023-04-0045, տրված 18.05.2023թ./ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Մանուչյան փողոցի թիվ 55 հասցեում գտնվող գույքը համաձայն փաստացի չափագրման կադաստրային քարտեզում տեղադրված է սխալ, ինչի արդյունքում առաջանում է անհամապատասխանություն: Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չեն առաջացնում սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հեդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-ի 31-րդ կետի 1-ին ենթակետով և 41-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մանուչյան փողոցի 55 հասցեում գտնվող փաստացի զբաղեցրած 0.0793հա մակերեսով հողամասի սահմանները՝ համաձայն «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 08.04.2025թ. կազմված հատակագծի նեկայացված հատակագծի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Ստորագրված է
26 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1309-Ա

26 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 26.05.2026թ. թիվ Կ-26052026-04-0145 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մանուշյան փողոցի թիվ 55 հասցեում գտնվող 0.0793հա մակերեսով հողամասից 0.0001հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Ստորագրված է
26 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1310-Ա

26 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Մ. ԿՈՐՅՈՒՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Գեղակերտ բնակավայրի Մ. Կորյունի փողոցի թիվ 6 տան բնակիչ Ռադիկ Ալբերտի Նիկողոսյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2318071 տրված 14.02.2007թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 10.08.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040123XDCMTT, 04012SKH4PXS/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Գեղակերտ բնակավայրի Մ. Կորյունի փողոցի թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Գեղակերտ բնակավայր,Կորյունի փողոց, թիվ 6/1 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Գեղակերտ բնակավայր,Կորյունի փողոց, թիվ 6 բնակելի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Ստորագրված է
26 օգոստոսի 2026 թվականին
Ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1311-Ա

26 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Մրգաստան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 8 տան բնակիչ Զեմֆիրա Աբգարի Հովականյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մրգաստան բնակավայրում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1127681 տրված՝ 03.11.2003թ.և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04162RS2UWKF/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 1-ին փողոց , թիվ 8 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Ստորագրված է
26 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1312-Ա

26 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Բաղրամյան փողոցի թիվ 1 տան բնակիչ Վարդան Գառնիկի Ծատրյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01032019-04-0031 տրված 01.03.2019թ., «Արսեն Մելքոնյան Արթուրի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0489/ կողմից 28.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022KXWGGMF, 04022VTEKMXB/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Բաղրամյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, Հ. Բաղրամյան փողոց, թիվ 1 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, Բարեկամության փողոց, թիվ 84/5 անասնաշենք:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Ստորագրված է
26 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին